Քաղվածք
Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0369/02/24

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

22.03.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործը, ըստ հայցի <<Սավա>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 03514047, պետական գրանցման համար՝ 11.110.01308) (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի 18.12.2023 թվականի գրությունը /որոշումը/ մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. <<Սավա>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի 18.12.2023 թվականի գրությունը /որոշումը/ մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի 18.12.2023 թվականի գրությունը /որոշումը/ մասնակի՝ <<Սավա>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, ճանաչել անվավեր:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ <<Սավա>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**